ԿԻԼԻԿԻՈՑ Տ. ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ Կ. ՊՕԼՍՈՒՄ

(Նամակ Կ. Պոլսից)

18 Նոյեմբեր 1904

Կիլիկիոյ Տ. Սահակ Բ. սրբազան կաթողիկոսի մայրաքաղաքս գալուն և եղած ընդունելութեանց մանրամասնութիւնք նկարագրուեցան տեղւոյս լրագիրներէ ոմանց մէջ և արդէն կարդացած կլինիք։

Երեկ Օգոստ. Կայսրը բարեհաճեցաւ ընդունել և մեծարանաց արժանացնել Տ. Սահակ սրբազան կաթողիկոսն և Ամեն. Պատրիարք Հայրը։ Ամեն. Տ. Սահակ սրբ. կաթողիկոսը բաղտ ունեցաւ Կայսերական Գահոյից մատուցանել Իր և Իլ. Հօտի երախտագիտութեան և անձնուիրութեան հաւատիքը։ Սրբ. կաթողիկոսին մինչև կայսերական պալատ ուղեկից էին ս. Պատրիարք Հայրը, իւր հետ Մէևնոյն լանդօյին մէջ բազմած և Արիս էֆ. Ֆէսճեանը, երկրորդ կառքով Կ. Պոլսի և Երուսաղէմի պատրիարքական փոխանորդներ Տ. Տ. Գաբրիէլ և Գէորգ սրբազաններ՝ Գառնիկ էֆ. Գուլումճեանի հետ։ Երրորդ կառքով, Հալէպի առաջնորդ Տ. Կարապետ ծ. վ. և Եղնիկ Վ. Պապաեանը։ Չորրորդ կառքով՝ Բէրութի նախորդ հովիւ Տ. Ներսէս Վ. Խապաեան, Տ. Վաղարշակ վարդապետ և Մանուկ սարկաւագ—բոլոր եկեղեցականները վեղարով։

Կայսերական պալատան մէջ բարձր. հիւրերն ըն-

դունեց Ա. սենեկապետ Հաճի Ալի փաշան և առաջնորդեց դահլիճ, ուր պատուասիրութիւններ եղան անոնց։ Այնուհետև դահլիճ մտաւ Մեծ Արարողապետ Իբրահիմ փաշա և ոսկէ ափսէի վրայ դրած Ա. կարգի Օսմանէլի պատուանշանը մատոյց կաթողիկոսին և իր իսկ ձեռքով նորա կուրծքէն կախեց մեծ ժապաւէնը։ Այս բարձր շնորհի առթիւ Իբրահիմ փաշա և Հաճի Ալի փաշա իրենց շնորհաւորութիւնները յայտնեցին։ Քիչ մը ետքը Իբրահիմ փաշա սրբ. հիւրերն և Արիս էֆէնդին առաջնորդեց Կայսերական դահլիճը, ուր ս. կաթողիկոսն Վեհ. Կայսեր ներկայութեան կարդաց հետևեալ երախտագիտական և բարեմաղթական ուղերձը.—

«Վեհափառ Տէր,

«Անարժանաբար Սսոյ Կաթողիկոս ընտրուիլս Ձեր Կայսերական Վեհափառութեան վաւերացման բարձր շնորհին արժանացած ըլլալն յանհուսս շնորհապարտ կացուցած է զիս և ժողովուրդս։ Այսօր Ձեր Կայսերական Վեհափառութեան կողմէ ընդունելու անգնահատելի պատուին արժանացած ըլլալով, բախտաւոր և երջանիկ կ'համարիմ զանձս։

«Կ'յայտարարեմ առաջի Ձեր Կայսերական Վեհափառութեան թէ ամբողջ կեանքս, Կայսերական Բարձր Կամաց համաձայն, օգտակար ծառայութիւններ մատուցանելու նուիրած եմ և պիտի աշխատիմ որ կրօնական իրաւասութեանս ներքև գտնուող Ձեր հաւատարիմ Հայ հպատակները միշտ աղօթող ըլլան Ձեր Կայսերական Վեհափառութեան թանկագին կենաց համար։

«Վեհափառ Տէր,

«Կայսերական Կառավարութեան շնորհիւ շէն մընացած Սսոյ Կաթողիկոսութեան կրօնական Աթոռին կալուածներէն Դլան անուն ագարակին հողերուն ըստ առաջնոյն նոյն Աթոռին սեփականութիւնը մնալու համար ինչպէս որ Ձեր Կայսերական Վեհափառութիւնը բարեհաճեցաւ Իր բարձր Իրատէով հրամայել, քաջալոյս եմ թէ տակաւին ասոր նման Կայսերական բազմաթիւ շնորհներու պիտի արժանանամ և նուաստս ու ժողո-

վուրդս Ձեր Կայսերական Վեհափառութեան բարեհաճ ակնարկին առարկայ պիտի մնանք միշտ։

«Բարձրեալն Աստուած Ձեր Կայսերական Վեհափառութիւնն իր բարձր Գահուն վրայ յաւէտ անսասան պահէ կատարեալ առողջութեամբ, և Ձեր Կայսերական Վեհափառութեան բոլոր բարեգութ իղձերն ու բաղձանքներն իր աստուածային յաջողութեանց շնորհին արժանացնէ, ամէն։»

Սրբ. Կաթողիկոսին ի պատասխան Վեհ. Կայսրը բարեհաճեցաւ արտասանել հետևեալ բարձր խօսքերը. «Հաւատարմական յայտարարութիւններէդ յոյժ գոհ եմ։ «Արդէն լսած էի և Հալէպի կուսակալն ևս ծանուցած «էր քու անձնուիրութիւնդ, և քու ժողովրդեանդ «տուած բարի խորհուրդներդ ու խրատներդ։ Ինչպէս «իմ հաւատարմիս՝ Պատրիարքին՝ ուղղամտութիւնը, «այնպէս ալ քու ուղղամտութիւնդ Իմ Կայսերական «գոհունակութեանս արժանացած է։ Վստահ եմ որ պի- «տի շարունակես նոյն ուղիղ շաւղին մէջ, և բարի խը- «րատներ շարունակ պիտի տաս ժողովուրդիդ։ Բոլոր «ժողովուրդիդ հաղորդէ Իմ Կայսերական գոհունակու- «թիւնս և բարևներս։»

Ամեն. ս. Կաթողիկոսն ու Պատրիարք Հայրը իրանց խորին երախտագիտութիւնն յայտնեցին Վեհ. Կայսեր ու ջերմագին բարեմաղթութիւններ ըրին, որուն ետքը Իբրահիմ փաշան առաջնորդեց նոցա Հաճի Ալի փաշայի սենեակը, ուր ընդունեցին պալատական աւագանւոյն շնորհաւորութիւնները։ Ապա Վեհ. Կաթողիկոսն ու սրբ. Պատրիարքն այցելեցին Կայսեր Ա. քարտուղար Թահսին փաշային, որ սրբազան Հիւրերը պատուասիրելով յայտնեց, թէ Վեհ. Կայսրը բարեհաճած էր պատուանշաններ շնորհել երկու փոխանորդ սրբազաններուն և Գուլիւմճեան էֆէնդիի։

Ապա Նոյն հանդիսով վերադառնալով Երուսաղէմատուն՝ ս. Կաթողիկոսն ընդունեց եկեղեցական և աշխարհական դասու շնորհաւորութիւնները, ինչպէս նաև

Մշոյ Հայ—Հռոմէականաց առաջնորդ Տ. Ներսէս եպս. Ճնտոյեանի, Խարբերդի Առաջնորդ ս. Ստեփան եպիսկոպոսի, Քաղդէացւոց պատր. փոխանորդ Եուսուֆ վարդ. Թապիպ և այլոց այցելութիւններն ու շնորհաւորութիւնները։

Վերջին անգամ հրաւիրեցին զն. Ամենապատուութիւն Գատը գիւղի եկեղեցին քարոզ խօսելու և օրհնութիւն տալու. և Կաթողիկոսը քարոզ կը խօսի բարեմաղթութեամբ վասն կենաց Սուլթանին և կը հրաւիրուի ի տուն Աբիկ Էֆէնտի Ունճեանի ի ճաշ, ընդ իւր ունելով միայն Գէորգ եպիսկոպոս և երկու-երեք վարդապետներ։ Այս դէպքէն երկու օր յետոյ պաշտօնական անձ մը կուգայ առ Կաթողիկոսն յԵրուսաղէմատուն և կը հարցանէ ի դիմաց Կայս. պալատան, թէ երբ ունի ճանապարհորդել ի Սիս... և Բ. Դրնէն յատուկ թուղթ եկաւ ծանուցանող թէ՝ Վեհ. Սուլթանը կարտօնէ մեկնիլ իւր պաշտօնատեղին։ Եւ այսպէս ս. Սահակ կաթողիկոս յառաջիկայ երեքշաբթի օր պիտի մեկնի մայրաքաղաքէս առանց ս. պատարագ մատուցանելու և պիտի երթայ յիւր վիճակն։

Ս. կաթողիկոսը երեկ մայր եկեղեցի իջաւ և վերջին անգամ նախագահեց արարողութիւններուն. Որդւոց որոտման տաճարում Ն. օծութիւն ս. պատարագի ժամանակ դարձաւ իր կաթողիկոսական աթոռէն և խօսեցաւ հետևեալ հրաժեշտի քարոզը հաւաքուած խուռըն բազմութեան ժողովրդեան.

«Սիրելի ժողովուրդ,

«Երկու խօսք պիտի խօսիմ ձեզ։

«Առաջին խօսքս Պոլսոյ մէջ, զոր ձեզի ուղղեցի, այս եկեղեցիին մէջ էր, և վերջին քարոզս ալ դարձեալ այս տաճարին մէջ խօսելով, պիտի վերջացնեմ։ Աթոռիս վրայ նստած միջոցիս, կը դիտէի աւագ Սեղանին պատկերը, յորում Աստուածածին նստած է և հրեշտակներ Գլխադիրի անջատ գլուխը կը ներկայացնեն։

Զարմանալի զուգադիպութիւնով մը՝ այս միևնոյն տաճարին մէջ ուղղեցի ձեզի իմ առաջին խօսքերս, որուն անունին նուիրուած եկեղեցիին երկար տարիներ ծառայած եմ Երուսաղէմի մէջ։

«Գիտէք, սիրելի ժողովուրդ, թէ ես ձեր մօտ հիւր մըն էի, և ահա կը մօտենայ դէպ ի Կիլիկիա վերադառնալու օրս։ Թերևս աւելի կամ պակաս մնացի ձեր մէջ, սիրելի ժողովուրդ, բայց հանդարտ է սիրտս որ ոչ օրի ցաւ կամ նեղութիւն չպատճառեցի։ Իմ այդ նեղութիւններս ու ձանձրութիւնս քաշեց դարձեալ Երուսաղէմի միաբանութիւնը, Երուսաղէմի Պօլսոյ Տունը։ Շնորհակալութիւններս կը յայտնեմ մասնաւորաբար եղբայրակցիս՝ Տ. Գէորգ Սրբազանի և Երուսաղէմի միաբանութեան։

«Ինչո՞ւ եկայ.—

«Ի հարկէ կուզէք իմանալ.—Ես նպատակ չունէի իմ վիճակիս հոգևոր կարիքները ձեզի պատմելու և ձեզի ձանձրացնելու։ Իմ միակ նպատակս էր ներկայանալ Ն. Կայս Վեհափառութեան, և իմ հպատակութիւնս ու երախտագիտութիւնս և իմ հոգևոր հովուութեանս յանձնուած Կիլիկիոյ ժողովրդեան հաւատարմական զգացումները յայտնել յոտս Կայս. Գահոյից։ Այս էր փափագս, և դուք, սիրելի ժողովուրդ, առջի օրէն լսեցիք ու կարդացիք թէ իմ այդ փափաքս իրագործուեցաւ։ Բաղդ ունեցայ ներկայանալու Ն. Կայս. Վեհափառութեան, Որ Իր Կայս. բարևները յանձնարարեց հաղորդել Կիլիկիոյ ժողովրդեան, և ես այդ հրամանները հեռագրաւ հաղորդեցի իմ ժողովրդեանս։ Ուրեմն մէլ եկած հասած է իմ Աթոռս վերադառնալու օրը։

«Սիրելի ժողովուրդ,

«Կիլիկեցի ժողովրդեան պիտի ուզեմ թէ՝ Պոլսոյ ձեր եղբայրակիցները, ձեր Կաթողիկոսը յանչափս պատուեցին, յարգեցին ու մեծարեցին, և տարակոյս չկայ թէ այդ յարգական ցոյցերը ձեր դէպ ի Կիլիկեցի ժողովրդեան ունեցած անկեղծ զգացումներուն արտայայտութիւնն է։ Դուք պարտաւորութեան տակ դրիք զիս և Կիլիկեցի ժողովուրդը։ Իմ ժողովուրդիս ազգակցա-

կան բարեները ես, ինքս անձամբ բերի և ձերինը ես պիտի տանիմ դարձեալ։

«Մեկնելու առթիւ պարտք ունիմ խորին երախտագիտութեան առ Ն. Կայս. Վեհափառութիւն։ Երբ ներկայացայ Վեհ. Սուլթանին, տպաւորութիւնս այն եղաւ թէ՝ Ն Կայս. Վեհափառութիւնը աղբիւր է ամենայն բարեաց, Որմէ կը բղխին միշտ գութ ու սէր և Առաքեալին ըսածին պէս այդ իշխանութիւնը Աստուծմէ տրուած է՝ հպատակներուն բարօրութեանը համար։

Աշխարհ է, սիրելի ժողովուրդ և կը գտնուին չարեր ալ, բարիներ ալ, ագէտներ ալ իմաստուններ ալ և ես ուրախութեամբ կը տեսնեմ թէ օրըստօրէ մեր մէջ կը բազմանան բարիները, հաւատարիմները և իմաստունները, որոնք կը վարձատրուին Կայս Կառավարութենէն։ Իմ խոյ.ունկ շնորհակալութիւնս և երախտագիտութիւնս հոս, Ս. եկեղեցւոյ մէջ և առաջի Աստուծոյ յայտնելով, կը յորդորեմ սիրելի ժողովուրդ որ ձեր հպատակութեան պարտականութիւններուն մէջ չթերանաք, որովհետև մեր զարգացումը, մեր յառաջդիմութիւնը մեր անկեղծ հպատակութենէն կախում ունի։

«Շնորհակալութիւն Օսմ. Պետութեան բարձրապատիւ նախարարներուն, որոնք ամէնքն ալ յարգալիր ու պատուալիր ընդունեցին և Կիլիկեցի ժողովրդեան տնտեսական ու կրթական խնդիրներուն վրայ հարցումներ ըրին և ես տեղեկութիւններ տուի, ու նշմարեցի թէ անոնք ալ կը ցանկան մեր յառաջդիմութեանը։

«Շնորհակալութիւն համայն ժողովրդեան Հայոց, որ ի Կոստանդնուպոլիս։ Դուք սպասածէս աւելին ըրիք Կիլիկիոյ Կաթողիկոսին և պարտաւորեցիք որ ես տիւ և գիշեր աղօթեմ ձեր ընտանեկան երջանկութեան, ձեր զաւակաց յառաջդիմութեանը և ձեր բարենպատակ գործերուն յաջողութեանը համար։ Ցուսով եմ որ աղօթքներս լսելի պիտի ըլլան Աստուծմէ և անոր Աջը միշտ անպակաս պիտի ըլլայ ձեր մէջէն, որպէսզի չմոլորիք, չիյնաք ու չսայթաքիք։

«Մեր նախնիքները կը կարծէին թէ միայն աշխարհի չորս ծագերէն հովեր կը փչեն, բայց հիմա, ամէն կողմէ կը փչեն և այդ հովերէն շատերը վնասակար են։

Ես կը մաղթեմ որ այդ վնասակար հովերը չհասնին ձեզի և Տէրը ձեզ պահէ ամէն այս տեսակ վնասաբեր հովերէն, կեղծ քահանաներէ և սուտ մարգասէրներէ։

«Երեսուն և եօթը եկեղեցի կայ Պոլսոյ մէջ, բայց ես որ առաջին օրհնութիւնս ասկէ տուի ձեզի, դարձեալ իմ վերջին օրհնութիւնս այս եկեղեցիէն կուտամ, սիրելի ժողովուրդ։

«Կ'օրհնեմ ձեզի որքան կեանք ունիմ և Աստուծոյ օրհնութիւնը միշտ անպակաս ըլլայ ձեր վրայէն»։

Ն. Օծութիւնը լուզուած Իր այսքան կանուխ տրրուած հրաժեշտէն, քարոզի միջոցին չկրցաւ զսպել զինքը և արցունքներ հոսեցան աչերէն, մինչ ժողովուրդը զգացուած և սրտաշարժուած՝ ամէններով կպատասխանէր նորա հայրապետական օրհնութիւններուն և բարեմաղթութիւններուն։ Ս. Պատարագէն ետք Ամեն. կաթողիկոսը գնաց Ներսէս Պատրիարքին և Պէզճեան Ցարութիւն ամիրայի գերեզմաններուն քով և հոգւոց արտասանեց և ապա գնաց Երուսաղէմատուն։

Վեհ. սուլթանը կամենալով իւր Կայսերական շնորհաց արժանացնել զս. կաթողիկոսն Կիլիկիոյ, ոչ միայն առաջին կարգի Մէճիտիէ և Օսմանիէ պատուանշաններ շնորհեց Նորան, այլ և Կիլիկիոյ վանքին սեպհական Դլանի ագարակը, զոր մեռնող Մկրտիչ կաթողիկոսն իւր անուան վրայ դարձուցած ըլլալուն համար մահլիւլ ինկած էր, և կառավարութիւնը աճուրդով ծախու հանած էր, միջնորդութեամբ Տ. Մաղաքիա պատրիարքին արգիլած էր վաճառումը, այս անգամ շնորհեց կրկին սեպհականութիւն վանքին։

Շնորհեց վանքապատկան ստացուածոց արքունի տրոց երկու հարիւր ոսկիէն աւելի դիզուած պարտքը։

Շնորհեց կաթողիկոսին անձին 3500 ղր. ամսական, որ պիտի ընդունի ամսէ ամիս տեղական կառավարութենէն (այս այն ամսականն է՝ որ Մկրտիչ Քէյֆոսիզեան

կաթողիկոսը իւր չարահնարութեամբ յաջողած էր ընդունիլ պետական գանձէն)։

Բաց աստի արտօնեց Սսոյ վանուց և Տաճարի վերանորոգութեան համար հարկ եղածն ի գործ դնել։

Ս. կաթողիկոսը խնդրած է եղեր գրաւոր կերպով իւր թեմի մէջ գտնուող այլ և այլ արժանաւոր անձանց համար պատուանշաններ, որոց մասին պարտ ու պատշաճը տնօրինել Բ. Դրան հրամայուել է Կայս. պալատէն։

Ս. Պատրիարքը կաթողիկոս սրբազանի գալէն յետոյ հրաւիրած էր Մայրաքաղաքիս մեծատունները, որ ի պէտս Շինութեան Դպրեվանուց Սսոյ Աթոռում հանգանակութիւն մի բանան իւրեանց մէջ, յորմէ կը յուսացուի երկու հազար լիրայի գումար մը գոյանալ։

Ի նորոյ իմացանք, որ Բ. Դրանէն հարցում եղել է Առանալի կառավարչին (վալիին) թէ որչափ ծախքի կարօտ է Սսոյ վանքի և Տաճարի նորոգութիւնը, որ կը նշանակէ թէ՝ նորա համար ևս գումար մը պիտի շնորհուի։ Բաց աստի սուլթանը հրամայած է, որ տասն աշակերտք ձրիաբար ընդունուին ի վիճակէն Կիլիկիոյ Կ. Պոլսոյ բարձրագոյն վարժարանաց մէջ։

ՊԱՐԹԵՒ